ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԴԱՍԵՐԸ

Սուրեն Մարտիկյան

Հայ ժողովուրդը շուտով կտոնի իր պատմության թերևս ամենակարևոր հաղթանակներից մեկի՝ Խոշաբի ճակատամարտում Հայկ Նահապետի տարած հաղթանակի 4500-ամյակը: Այս պատկառելի տարեդարձը ստիպում է նորովի գնահատել մեր պատմության բազմաթիվ հարցեր:

Այնքան մեծ է Պատմահոր արծարծած հարցերի շրջանակը, որ այսօր էլ ո՛չ միայն մեր, այլև ամբողջ տարածաշրջանի պատմության՝ ուսումնասիրության կարոտ բազմաթիվ հարցեր կան: Մասնավորապես, արդեն վաղուց ժամանակն է փորձել տալու Մովսես Խորենացու «Հայոց պատմության» «Հայկ և Բել» վիպասքում հայոց ռազմարվեստի ու ռազմատեսական մտքի համակողմանի գնահատականը: Վիպասքը դարեր շարունակ նաև հսկայական դաստիարակչական նշանակություն է ունեցել ու կարող է 21-րդ դարի հայ երիտասարդությանը հայրենասիրության ոգով կրթելու անփոխարինելի հենասյուներից մեկը դառնալ:

Ներածություն

Որպեսզի պարզ լինի վերլուծության առարկան, համառոտ ներկայացնենք վիպասքը:

Ըստ Պատմահոր՝ հսկա աղեղնավոր Հայկը, չկամենալով ենթարկվել բոլորի վրա բռնանալ փորձող Տիտանյան Բելին, իր որդիների հետ հեռանում է հյուսիս: Բելը պատվիրակություն է ուղարկում Հայկի մոտ, առաջարկում վերադառնալ ու հնազանդվել իրեն, սակայն, վճռական մերժում ստանալով, մեծ բանակով արշավում է Հայկի դեմ:

Հայկը հավաքում է իր որդիներին, թոռներին, «ուրիշ մարդկանց, որ իր ձեռքի տակ ուներ»[1] ու շարժվում հակառակորդին ընդառաջ:

Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Վարագ լեռան և Վանա լճի միջև գտնվող տարածքում, Խոշաբի աջ ափին՝ գետաբերանից քիչ հե-

[1] Մեջբերումները կատարվել են ըստ Մովսես Խորենացու Հայոց պատմության Ստ.Մալխասյանի աշխարհաբար վերածման (Երևան, 1940, էջ 20-29). համեմատի՛ր Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 31-40:

ռու (տե՛ս նկ. 1)։ Հայկի շարած սեպաձև (անկյունով առաջ) մարտակարգի կենտրոնը մխրճվում է Բելի զորքի մեջ։ Այդ ժամանակ էլ Հայկն իր լայնալիճ աղեղը լարում ու եռաթև նետով գետնին է տապալում բռնակալին։ Բելի խառնամբոխ բանակը, սարսափած, ցրվում է։



Նկար 1. Խոշաբի ճակատամարտը մ.թ.ա. 2492

Զինված ապստամբությունը՝ որպես անկախության հասնելու ճանապարհ

Խորենացու հաղորդած տեղեկություններում մի հիմնախնդիր կա, որը, ավելորդ դժվարություններ ստեղծելով, որոշ պատմաբանների ստիպել է հրաժարվել ռազմարվեստի հարցերի խոր ուսումնասիրման մտքից։ Խնդիրն այն է, որ ռազմարվեստին վերաբերող մի շարք հարցերում գրեթե անհնար է սահմանազատել, թե ի՛նչն է պատմական իրականությունը և ի՛նչը՝ դրա արտացոլումը։ Ցանկացել է, թե ոչ, սակայն մի շարք հարցեր Խորենացին դիտում է իր ժամանակակցի աչքերով։ Ակնհայտ է, որ Խորենացուն հասած տեղեկություններն անբավարար են, որպեսզի նրանց համադրումը հասցներ իրադարձությունների ընթացքի ամբողջական պատկերմանը. ուստի, նա մեթոդներ է մշակում խայտաբղետ նյութը կազմակերպելու համար։ Հետևաբար, մեր կողմից տրված գնահատականները վերաբերում են ո՛չ թե ռազմական գործողություններին միայն, այլ՝ Խորենացու կողմից դրանց տրված գնահատականներին։

Խորենացին չի մերժում առասպելներն ու ավանդույթները՝ որպես պատմական աղբյուր։ Ավելին, իր ներկայացրած առասպելները Խորենա-

ցին ջանում է պարզաբանել, փոխադրել առօրեական հասկացություններ-ի հարթություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում, 5-րդ դարի պատմիչը նկարագրում է հեռավոր անցյալի ռազմական գործողությունները, ընդ որում՝ համարձակորեն վերլուծելով «ապստամբություն», «պատերազմ» ու «ճակատամարտ» երևույթները: Ահա՛ այստեղ է, որ դրսևորվում է Խորենացու յուրահատուկ մոտեցումը ռազմարվեստի բազմաթիվ, այդ թվում նաև տեսական հարցերի նկատմամբ: Ուշագրավ է, որ վեր հանվող հարցերի մի մասը հասկանալու համար ո՛չ միայն լայն մտահորիզոն էր պետք ունենալ, այլև՝ մասնագիտական կայուն գիտելիքներ: Հոգևորական լինելով հանդերձ՝ նա իրադարձությունները պատկերում է փորձառու զորավարի պես խոր և համակողմանիորեն:

Պատերազմի նկարագրությամբ ու ռազմատեսական բնույթի առանձին հարցեր վեր հանելով՝ Խորենացին մեզ ռազմարվեստի պատմության ուսումնասիրության զգալի նյութ է տալիս: Սակայն ասել, թե եղած տեղեկությունները բավարար են՝ ճիշտ չի լինի: Հասկանալի է, Պատմահայրը չի հետապնդել միայն ռազմարվեստի պատմության նկարագրման նպատակներ: Նա մեզ հետաքրքրող հարցերի շրջանակը քննում է այնքանով, որքանով հարկ է համարում ժողովրդի պատմությունն ամբողջականացնելու համար: Մյուս կողմից էլ՝ դա բնավ չի նշանակում, թե ռազմարվեստի պատմությունը աչքաթող է արվել:

Նախ փորձենք հասկանալ Խորենացու մոտեցումը ապստամբությանը:

Ինչպես ապստամբությանը, այնպես էլ պատերազմին մեկական գլուխներ հատկացնելով՝ Պատմահայրը ձգտում է հավասարության նշան դնել դրանց միջև: 5-րդ դարի հայ հայրենասեր պատմիչի վերաբերմունքը չէր կարող այդպիսին չլինել: Օտար տիրապետությունից դժգոհ հասարակության տարբեր խավերը կորցրած անկախությունը վերականգնելու ուղիներ էին որոնում, ինչն արդիական էր դարձնում զինված պայքարի թեման: Չմոռանանք նաև, որ «Հայոց պատմության» պատվիրատուն՝ Սահակ Բագրատունին, 481թ. ծագած ապստամբության ղեկավարներից մեկն էր: Սակայն Խորենացին այստեղ էլ ինքնատիպ է: Նա կարծես չի աշխատում հիմնավորել անկախության ձեռքբերման կարևորությունը: Ուղղակի տրվում են անկախության առավելությունները՝ վերջնական եզրակացությունը ընթերցողին թողնելով: Փորձը ցույց է տալիս, որ այդ դեպքում խոսքն ավելի համոզիչ է հնչում, և հարցը կիսատ ու չբացահայտված չի մնում:

Հայկի առաջ չի ծառանում Բելի ուղարկած պատվիրակության պահանջների ընդունման կամ մերժման խնդիրը. նրա համար՝ անկախությունը բնական անհրաժեշտություն է: Զենքի ուժով Բելի հաստատած իշխանությունը («Բելին պատահմամբ հաջողվեց բռնանալ և բոլոր երկիրը գրավել») ևս մեկ հիմնավոր պատճառ է բռնապետի անօրինական իշխանությունը թոթափելու համար: Խորենացին ամեն կերպ աշխատում է շեշտել, որ Հայկն իր ազատության համար գիտակցված պայքարի է ելել և պատրաստ է ամեն զոհողության:

Պատերազմը նկարագրելիս՝ Խորենացին համակարգված մոտեցում է ցուցաբերում և ոչինչ աչքաթող չի անում: Փաստորեն, Խորենացին վեր է հանում այն բոլոր հիմնական հարցերը, որոնք այսօր՝ 21-րդ դարում, կազմում են զարգացած ռազմարվեստ ունեցող պետությունների ու ռազմական դաշինքների մարտական կանոնադրությունների հիմքը: Իրադրության զարգացումը ներկայացվում է հարցերի բավականին լայն շրջանակում, ու հիմնականում ամբողջացվում է ռազմական գործողությունների պատկերը: Հաջորդաբար ներկայացվում են Բելի կողմից պատերազմին նախապատրաստվելը և արշավանքը դեպի հյուսիս, հարձակումը «Կադմոսի տան» վրա, Հայկի պատասխան քայլերը, վճռական ճակատամարտը (հաղթանակը վճռական ճակատամարտում) ու հակառակորդին երկրից վտարելը (վերջնական հաղթանակը պատերազմում):

Ուշագրավ է, որ եթե ճակատամարտի նկարագրությունն ընդգրկում է ավելի քան մեկ և կես տպագիր էջ, ապա դեպի հյուսիս Բելի արշավանքի և նրա սպանվելուց հետո նրա բանակի՝ հայոց երկրից վտարման նկարագրությունները սահմանափակվում են մեկական ոչ մեծ նախադասություններով:

Պատերազմը

Նախահարձակ գործողությունների մասին Խորենացին գրում է. «Տիտանյան Բելը… հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարադի երկիրը, Կադմոսի տան մոտ»:

Նախքան այլ կարգի հարցերի վերլուծությանն անցնելը, նկատենք, որ հատուկ շեշտվում է, թե Բելի բանակը բաղկացած էր միայն «հետևակից», որը թեև «մեծ բազմություն» ուներ, սակայն հեծյալ զորամասեր չուներ: Դա այն դեպքում, երբ հետագայի պատերազմների մասին խոսելիս Խորենացին առիթը բաց չի թողնում գովերգելու իր կազմակերպվածությամբ ու շեշտակի գրոհներով ավելի քան մեկ հազարամյակ Առաջավոր Ասիայում

հռչակված հայոց այրուձին կամ խոսելու մյուս երկրների հեծյալ զորամասերի մասին (այդպիսի մի ակնարկ կա «Հայոց պատմության» ԺԳ գլխում):

Պատմահայրը համակրում է Հայկին ու բնավ չի ձգտում դա թաքցնել: Այսուհանդերձ, Բելի զորքերի գնահատականներում Պատմահայրը օբյեկտիվ է ու չի թերագնահատում նրանց: Պատերազմի ընթացքի, ապա նաև ճակատամարտի նկարագրություններում Բելի զինվորներին նա հայտարարում է «հավերժական քաջեր», «երկնադեզ հասակով մրցող հսկաներ», «զորավոր մարդիկ» և այլն: Սակայն ընդգծվում է, որ ո՛չ «հսկաները», ո՛չ էլ նրանց «մեծ բազմությունը» Հայկի մոտ խուճապ չեն առաջացնում: Դա վերաբերում է նաև պատերազմի առաջին փուլին, չնայած Խորենացու մոտ կարդում ենք. «Կադմոսը *փախուստ է* տալիս Հայկի մոտ»:

Անգամ ամենամեծ ցանկության դեպքում՝ «փախուստը» մարտատեսակ չի կարող լինել: Այդուհանդերձ, Խորենացին հենց այդ բառով է նկարագրել Կադմոսի հակաքայլերը: Բայց «փախուստը» պարտություն չի համարվում: Ավելին, վճռական ճակատամարտում նրան է վստահվում զորաթևերից մեկը: Հայկը կարո՞ղ էր վճռական ճակատամարտում մի ամբողջ զորաթև վստահել մեկին, ով մի քանի օր առաջ իր մեջքն էր ցույց տվել այն հակառակորդին, ում դեմ այժմ պետք է դուրս գար առճակատման: Իհարկե, ո՛չ:

Կադմոսը գիտեր իր անելիքը: Այս դեպքում կարող ենք խոսել միայն կազմակերպված ու նախօրոք մտածված մարտավարական հնարքի՝ հաջող կազմակերպված ու նվազագույն կորուստներով իրականացված նահանջի մասին: Իսկ եթե այդպես է, ապա նկարագրվում է ռազմական գործողությունների մի տիպ, որը բնավ նման չէ մինչ այդ (5-րդ դարը) շուրջ յոթ դար Հայաստանում ընդունված ռազմավարությանը[2]:

Նշենք նաև, որ Խորենացին մի հիշատակում էլ է անում. «(Պատերազմից հետո - Ս.Մ.) Հայկը… իր Կադմոս թոռին շատ բան է պարգևում պատերազմի ավարից…»: Եթե Կադմոսի նահանջը իրոք «փախուստ» լիներ, պարգևները «շատ» չէին կարող լինել:

[2] Արտաշես Ա-ը (մ.թ.ա. 189-160թթ.) սահմանամերձ շրջաններում ստեղծել էր մշտական զորք պահելու իրավունք ունեցող բդեշխություններ: Բդեշխների վրա էին դրվել սահմանների անվտանգության ապահովման և հակառակորդին առաջին հակահարված հասցնելով՝ հիմնական (թագավորական) ուժերի համար ժամանակ շահելու խնդիրները: Նկարագրվող ռազմավարությունը, հավանաբար, մինչև Արտաշես Ա-ի բարեփոխումներն ընդունված ռազմավարությունն է:

Պատերազմի հետագա ընթացքի մասին կարդում ենք. «Բելը հանդուգն ու անճոռնի ամբոխի զորությամբ… շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները, վստահ լինելով զորավոր մարդկանց սրտերի ու անձերի վրա»: Նշվում է, որ հարձակումը շարունակելու որոշումը Բելն ընդունել է՝ ելնելով իր զորքի քանակական առավելություններից՝ Հայկի կազմակերպչական բնույթի աշխատանքներն ավարտելուն խոչընդոտելու կամ նախքան Հայկի ուժերի հետ միավորվելը Կադմոսին ջախջախելու համար:

Հայկն այդ ընթացքում արագորեն կատարում է զորահավաք և Կադմոսին միանալուց հետո շարժվում է հակառակորդին ընդառաջ: Կարող ենք արձանագրել, որ Խորենացին կարողանում է ըմբռնել և ճիշտ կերպով մեզ է ներկայացնում պատերազմում սկսված ռազմավարական բեկումը: Պատերազմի սկզբում՝ պաշտպանությունը պասիվ էր (առաջապահ ուժերը նահանջում էին), բայց նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, հակառակորդին երկրի կենտրոնական նահանգներ ներխուժել թույլ չտալու համար, Հայկը որոշում է վճռական ճակատամարտում կանգնեցնել նրա առաջխաղացումը:

Ճակատամարտը

Ակներև է, որ Հայկի գործողությունները համապատասխանում են իրավիճակին: «Ամբողջ ասպարեզներ» ընդառաջ գնալով ու ճակատամարտի համար հարմար վայր հասնելով՝ Հայկը սպասում է, որ հակառակորդն անցնի գետը:

Փաստորեն, միայն այստեղ ենք տեսնում Բելի բանակը թերագնահատող արտահայտություն՝ «բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակ»: Դա էլ ավելի կասկածելի է, քանի որ սա ո՛չ թե ռազմարվեստի բարդ ու խոր մասնագիտական գիտելիքներ պահանջող խնդիր է, որի դեպքում կարելի էր խոսել Խորենացու մակերեսային գիտելիքների մասին, այլ՝ ընդհանուր բնույթի տարրական հարց: Մեզ հավանական է թվում, որ խոսքը հակառակորդի հետ ընդհարման շտապող զորքի՝ որոշակիորեն խախտված երթային կամ նախամարտական կարգի մասին է: Խորենացին այս ձևով է նկարագրում Բելի զորքերի հախուռն գետանցումը: Բացառված չէ, որ ամբողջ բանակը միանգամից է անցել գետը: Այդ դեպքում հնարավոր է, որ գետանցումն իրոք անկանոն եղած լինի:

Պատմահայրը նշում է, որ Հայկը, «տեսնելով պինդ սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց» (հակառակորդի

մարտակարգի թույլ կողմերը հաշվի առնելով), մարտակարգի աջ թևը հանձնում է ավագ որդուն՝ Արամանյակին՝ «երկու եղբայրներով», ձախ թևը՝ Կադմոսին՝ «իր ուրիշ երկու որդիներով», և շեշտում՝ «որովհետև աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին»: Հայկն իր վրա է վերցնում կենտրոնի անմիջական հրամանատարությունը, իսկ «մյուս բազմությունը» կանգնեցնում է հետևում՝ կազմելով սեպաձև մարտակարգ:

Մարտավարության մի ամբողջ շարք հարցերի պարզաբանման համար կարևոր է թույլ թևերի ջախջախումից խուսափելու համար «աղեղ և սուր գործածելու մեջ կորովի» մարդկանց ընտրելու կանխամտածումը: Սրակիրները անմիջապես իրենց վրա էին վերցնելու թևային գրոհների կասեցումը, իսկ նետաձիգները, թևերի ուղղությամբ նետահարելով, խափանելու էին թևանցումների իրականացումը: Ընդ որում, գիտակցելով զորաթևերի հրամկազմի զոհվելու մեծ հավանականությունը՝ Հայկը և՛ Արամանյակին, և՛ Կադմոսին տեղակալներ (եղբայրներ) նշանակեց: Այս քայլը միանգամայն հասկանալի կլիներ, եթե Հայկը նշանակեր մեկական, այլ ոչ թե միանգամից երկուական տեղակալներ:

Մարտից առաջ տեղակալի տեղակալ (մարտում հրամանատարի զոհվելու դեպքում տեղակալի և մարտի ընթացքում հրամանատարությունը ստանձնած տեղակալի զոհվելու դեպքում՝ երկրորդ տեղակալի) նշանակելու սկզբունքը եվրոպական երկրներում սկսեց կիրառվել միայն 18-19-րդ դարերում և պայմանավորված էր հրետանու արագաձգության ու կրակի հզորության աճով: Հայոց բանակում հնագույն ժամանակներից կիրառվող այս սկզբունքի արդիականության մասին է վկայում նաև այն փաստը, որ նախօրոք երկրորդ (երրորդ) տեղակալի նշանակումն այսօր լայն տարածում է գտել գրեթե բոլոր երկրների բանակների մարտական կանոնագրքերում: Սա, մարտի նախապատրաստման խնդիրների տեսանկյունից ռազմատեսական մտքի զարգացման պատմության համար առանցքային նշանակություն ունեցող հարցերից մեկը լինելով, հետագա է՛լ ավելի խոր ուսումնասիրման կարիք ունի:

Բելի մտահղացումն ու գործողությունների տրամաբանությունը

Փորձենք հասկանալ Բել-զորավարի գործողությունների էությունը, որը Հայկ-զորավարի կիրառած մարտավարության վերլուծությունն ամբողջացնելու համար կարևոր նշանակություն ունի:

Պատմաբանները մինչ այժմ Բելի մտահղացման ու գործողությունների տրամաբանության խնդրին մոտեցել են միայն Հայկի «տեսանկյունից»՝ վերջինիս իրավացիորեն, բայց միակողմանի փառաբանելով, որի հետևանքով եզրահանգումները հիմնականում անկողմնակալ չեն եղել: Մինչդեռ, թեև ձեռքի տակ եղած նյութն անբավարար է, սակայն որոշ հարցերի պատասխանները կարելի է ստանալ:

Խորենացին կարևոր դիտողություն է անում. «Բելը, մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում (Խոշաբի ձախ ափին - Ս.Մ.) մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում»: Ակնարկվում է, որ Բելը հնարավորություն է ունեցել կատարելու հրամանատարի կողմից մարտի նախապատրաստման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները.

- *Մարտադաշտի դիտում և տեղագննում.* Բելի բանակը կանգնած էր Խոշաբի ձախ ափին, այնպես որ, անհրաժեշտության դեպքում կարող էր խուսափել ճակատամարտից:
- *Մարտական իրավիճակի գնահատում.* Կարծում ենք, որ Հայկի բանակի մոտենալուն հետևող Բելը վերլուծում էր նաև կողմերին նպաստող ու խոչընդոտող գործոնները, գետի մյուս ափին զորամասերի կենտրոնացման ու մարտակարգ շարելու հնարավորությունները:

Հավանաբար այլ նախապատրաստական աշխատանք կատարելուց հետո է միայն Բելը ընդունել մարտի որոշումը: Սակայն չկա ո՛չ մի ակնարկ, որ մեզ օգներ հասկանալ Բելի մտահղացումը: Այդ պատճառով փորձենք հասկանալ, թե, առհասարակ, ի՞նչ քայլերի կարող էր դիմել Միջագետքի հզոր տիրակալը:

Բելը կարող էր ընտրել հետևյալ չորս տարբերակներից մեկը.

1. *Ուժերի համախմբում կենտրոնում.*- Հայկի զորքերի մարտակարգի ճեղքում ու թևերի մաս-մաս ջախջախում:

2. *Ուժերի կենտրոնացում թևերից մեկում.*- Մարտակարգի թևերից մեկի մեջ մխրճվելով՝ շրջանցել կենտրոնն ու Հայկին հարկադրել ուժերը հանել հարվածի տակից:

3. *Ուժերի կենտրոնացում* ո՛չ թե մեկ, այլ՝ *միաժամանակ երկու զորաթևերում:*

4. *Ամբողջ ճակատով միաժամանակյա գրոհ* ՝ փաղանգ հիշեցնող մարտակարգով:



Նկար 2. Կաննի ճակատամարտը մ.թ.ա. 216թ.

Մարտի մտահղացման առաջին տարբերակը շատ դյուրին և արագ հաղթանակ է խոստանում (տե՛ս նկ. 2)։ Ոչ խորամանկ հնարք լինելով՝ այն լայն տարածում էր ստացել հին աշխարհում, սակայն դեռևս մ.թ.ա. 1-ին հազարամյակում այն աստիճանի շաբլոնային ու ինքնանպատակ էր դարձել, որ որոշ զորավարներ բավականին հաջող հակաքայլեր էին կիրառում։ Նման գործողությունների տիպիկ օրինակ է Կաննի մոտ մ.թ.ա. 216թ. տեղի ունեցած ճակատամարտը Երկրորդ Պունիկյան պատերազմի ժամանակ (մ.թ.ա. 218-201թթ.)։ Այս ճակատամարտում ուժերը կենտրոնում խտացրած հռոմեական 70 հազարանոց բանակը շրջապատվեց ու ոչնչացվեց Կարթագենի ընդամենը 48 հազարանոց բանակի կողմից։

Ուժերը զորաթևերից մեկում կենտրոնացնելը (երկրորդ տարբերակ) ևս պետք է որ հայտնի լիներ Խորենացուն։ Դեռևս մ.թ.ա. 371թ. Լևկտրայի ճակատամարտում Թեբեի զորքերի հրամանատար Էպամինոնդասը, զորաթևում ուժերի մեծ խտություն ստեղծելով (8 տողանից կազմված փաղանգի թևում՝ 50 տողան), պարտության էր մատնել սպարտացիներին (տե՛ս նկ. 3)։ Հասկանալի է, որ զորաթևերից մեկի ուժեղացումը կատարվում է մարտակարգի ճակատը նեղացնելու հաշվին։



Նկար 3. Լևկտրայի ճակատամարտը մ.թ.ա. 371թ.

Երրորդ տարբերակը Կաննի ճակատամարտում Հաննիբալի իրականացրած շրջապատումից հետո էլ սոսկ բացառություն էր համարվում: Զորավարները չէին համարձակվում մարտակարգի կենտրոնը թուլացնել ընդհուպ մինչև 18-րդ դարը, երբ մեծաքանակ հրետանու կենտրոնացված և անշարժ արգելափակիչ կրակով սկսեցին կաշկանդել հակառակորդի հետևակի գործողությունները ինչպես մարտադաշտում, այնպես էլ նրանից դուրս: Ավելի ուշ ռազմական տեխնիկայի զարգացումը հնարավորություն տվեց, հատող հարվածներ կիրառելով, նախօրոք գործողություններում կաշկանդված հակառակորդի թիկունք դուրս գալու օպերացիաներ իրականացնել:

Ի վերջո, մեծաթիվ ուժեր ունենալով կարելի էր ընտրել չորրորդ տարբերակը և նեղ ճակատում «բախտը փորձելու» փոխարեն՝ հակառակորդին հարկադրել մարտ լայն ճակատով և, հետևաբար, փոշիացնել նրա առանց այն էլ փոքրաթիվ ռեզերվները: Այս տարբերակը հայտնի էր հնագույն ժամանակներից: Տեղեկություններ կան, որ այս մարտակարգը Շումերի քաղաքների բանակներում մ.թ.ա. 3-րդ հազարամյակում սկսեց կիրառվել, և շուտով տիրապետող դարձավ վահանակիրների կազմած պատի հետևից գրոհի մարտավարությունը: Այն զարգացրին ասորեստանցիները մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում, իսկ փաղանգը ստեղծելով՝ այն իր գագաթնակետին հասցրին հույները: Հակառակորդին մո-

տենալու համեմատաբար ապահով միջոց լինելով՝ այն դարձավ մարտավարության պարտադրված հնարք:

Վերը նշված տարբերակներից ո՞րը կընտրեր Բելը:

Ռեզերվը գտնվել է Հայկի շարած մարտակարգի կենտրոնում: Հետևաբար, քիչ հավանական է, որ Բելը կենտրոնում, մասնատող գրոհի միջոցով հաջողության հասնելու իրական հույս ունենար: Բացի այդ, ուժերի նպատակային կենտրոնացման հնարավորությունը խիստ սահմանափակվում էր լեռնային տեղանքի պատճառով: Պատահական չէ, որ Խորենացին մարտադաշտն անվանում է ո՛չ թե «դաշտ», այլ՝ «բարձրագույն լեռների միջև մի դաշտաձև տեղ»: Այսինքն՝ մարտադաշտը լեռների զառիթափ լանջերով ու Վանա լճով եզերված լայն, բայց կիսաթեք և բավականին կտրտված սարահարթ էր: Այն առաջին հերթին խոչընդոտելու էր Բելին, քանի որ պարզ է՝ հեռավոր անցյալի պայմաններում քանակական առավելություններն օգտագործելու հիմնական ձևը պետք է լիներ ուժերի կենտրոնացումով հզոր գրոհը:

Թևում (թևերում) ուժերի կենտրոնացման հավանականությունը փոքրանում է նաև, եթե նկատի ունենանք, որ Բելի բանակի առաջին հզոր գրոհը կասեցվեց, իսկ Խորենացին անընդհատ շեշտում է կենտրոնում ծավալված գործողությունների վճռական բնույթը:

Հայկն ընտրել էր առավելագույնս հարմար ու լայն մարտադաշտ: Բելը պետք է աշխատեր զորքը մեծ ճակատով դասավորել, այսինքն՝ նա պիտի ընտրեր 4-րդ տարբերակը: Այդ դեպքում Հայկը հարկադրված էր լինելու, ուժերի գերլարումով, զորքի քանակին չհամապատասխանող լայն ճակատով մարտակարգ կազմել ու չէր կարողանալու խոչընդոտել Բելին, եթե վերջինս միաժամանակ երկու թևերում էլ թևանցումներ սկսեր: Սակայն, թևանցումների դիմելիս, անխուսափելիորեն թուլանալու էր Բելի բանակի մարտակարգի կենտրոնը, որտեղ սովորաբար գտնվում էր հրամանատարը: Հետևաբար, թևանցման հեռանկարը Բելի համար թեև գայթակղիչ էր, բայց անհնար էր խոր շրջանցման իրականացումը, որով թևանցումն առհասարակ անարդյունավետ ու աննպատակահարմար էր դառնում:

Ռազմարվեստի տեսական վերլուծության փորձերը

Ճակատամարտի ընթացքի համառոտ նկարագրություն տալով՝ Պատմահայրը նշում է երկու կողմերից բազմաթիվ զոհերի մասին և ավելացնում. «կռիվն (անորոշ է մնում), երկու կողմերն էլ անպարտելի մնալով»:

Ճակատամարտի ընթացքը փուլերի է բաժանվում:

Առաջին փուլում Բելն ամբողջ ճակատով վճռական գրոհով փորձում է խախտել Հայկի բանակի մարտակարգը: Գրոհը հաջող է եղել: Հակառակ դեպքում Բելը բլրից չէր իջնի ներքև:

Երկրորդ փուլում Հայկի շարած մարտակարգը հակառակորդի զորաթևերին հարկադրել էր առաջանալ ու գրոհի անդրադարձման պահին, փաստորեն, հայտնվել էր Բելի բանակի կենտրոնում մխրճված դիրքում:

«Այս անսպասելի տարակուսական դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և հետ քաշվելով սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր»: Սա ևս կարող է կռվան հանդիսանալ այն տեսակետի համար, որ Բելն առանձնապես հոգ չի տարել մեծաթիվ ռեզերվներ պահելուն և հույս ուներ առաջին իսկ գրոհով որքան հնարավոր է արագ ավարտել մարտը: Խորենացին չի բավարարվում մարտի նկարագրությամբ: Վերլուծելով Բելի մարտավարությունը՝ նա շարունակում է բացահայտել նրա մտահղացումը: «Զարհուրած» բռնակալի հետ քաշվելու մասին հաղորդումից հետո կարդում ենք. «… որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպեսզի երկրորդ անգամ ճակատամարտ սարքի»: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ *Հայկը ճիշտ էր ընտրել ո՛չ միայն ճակատամարտի վայրը, այլև՝ ժամանակը:*

Սակայն պատերազմի նկարագրության մեջ ո՛չ մի տեղ չի խոսվում Բելի կողմից զորքը մասնատելու մասին. նա ո՛չ թե մարտը դադարեցնելու կամ նահանջի հրաման է տվել, այլ՝ ընդամենը որոշել է հետ քաշվել՝ բլրի վրայից մարտին հետևելու համար: Հետևաբար, վերջապահ ուժերը մարտադաշտին շատ մոտ պետք է լինեին, և Բելը նրանց տեղ հասնելու հետ մեծ հույսեր էր կապում: Հայկի փոքրաթիվ ուժերը, որոնք մինչ այդ մեծ դժվարությամբ կասեցրել էին առաջին գրոհը, չէին դիմանա է՛լ ավելի մեծ թափով երկրորդ գրոհին: «Աղեղնավոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քարշում է լայնալիճ աղեղը» և տապալում Բելին:

Ճիշտ է ընտրվում նաև գլխավոր խաղաքարտը շահարկելու պահը:

Բելը նետահարվում է այն ժամանակ, երբ նրա զինվորները, շարունակվող մարտի պայմաններում, անորոշության մեջ, բռնակալի վճռական քայլին էին սպասում, իսկ նա, այդ զգալով, որոշել էր հետ քաշվել՝ բլրի վրայից մարտին հետևելու համար:

Բռնակալի մեծաթիվ բանակի ամենաթույլ տեղը ինքը՝ բռնակալն է: Բելի բանակին Հայկական լեռնաշխարհի խորքերն էին հասցրել նրա աշխարհակալական նկրտումները: Նրա ցասումից վախն էր միայն համա-

խմբում այդ տարասեռ ամբոխին: Հետևաբար, Խորենացին իրատեսորեն է նկարագրում Բելի սպանվելուց հետո սկսված խուճապը. «իսկ ամբոխն այս քաջության ահագին գործը տեսնելով՝ փախչում է, ամեն մեկը իր երեսը դարձած կողմը»:

Սա մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ եթե Խորենացի-հոգևորականն այդքան խորությամբ կարողանում էր վերլուծել ռազմարվեստը, ապա զորավարները դա կանեին շատ ավելի բարձր մակարդակով:

Աղեղնավոր Հայկը

Ճակատամարտում Հայկի բանակի կողմից կիրառված զենքերից Պատմահայրը նշում է միայն աղեղն ու սուրը (հակառակորդին մեծ հեռավորության վրա՝ 250 և ավելի մետրից մինչև 30 մետր խոցելու համար) և մերձամարտի համար նախատեսված հիմնական զենքերը: Առանձնահատուկ պարծանքով նշվում է «լայնալիճ» աղեղի կիրառությունը (որով նետի խոցման հեռավորությունը կարելի էր կրկնակի մեծացնել):

Հասկանալի է, որ միայն երկու տիպի զենքերով բանակը չէր կարող դուրս գալ վճռական ճակատամարտի: Կարելի է զենքերի մի քանի տեսակներ նշել, որոնք հնագույն ժամանակներից տարածված էին Հայկական լեռնաշխարհում (տեգ, նիզակ, պարսատիկ, դաշույն, սաղավարտ, պղնձե կամ բրոնզե զրահ, վահան և այլն): Վերը թվարկված զենքերի մի մասը բրոնզի դարում շատ ավելի տարածված էր, քան, ասենք՝ սուրը, որը շատ «թանկարժեք» լինելով՝ զենքի ամենատարածված տեսակը չէր կարող լինել: Պակաս կարևոր չէ նաև, որ երբեք նետաձիգները չեն կազմել հայոց բանակի գլխավոր հարվածային ուժը: Ընդհակառակը, լեռնականներին հատուկ է մերձամարտի մտնելու ձգտումը: Այդ դեպքում ինչո՞ւ են անընդհատ շեշտվում նետաձիգների գործողությունները, և ինչո՞ւ է Հայկն «աղեղնավոր»:

Նա ընդօրինակման արժանի առաջնորդ է, հմուտ զորավար ու օժտված զինվորական: Խորենացին մեծ ոգևորությամբ է խոսում Հայկի մասին, բայց նրան ակնհայտորեն համակրելով հանդերձ՝ նրան չի ներկայացնում որպես զենքի տարբեր տեսակների տիրապետող զինվորական: Դրա համար բոլոր տվյալները (բարձր հասակ, մկանոտ կազմվածք, զենքին կատարելապես տիրապետում, դաշտը զննելու և իրադրությունը ճիշտ գնահատելու կարողություն) ունենալով հանդերձ, Հայկը շարունակում է միայն նետաձիգ լինել: Խորենացու վերաբերմունքը նույնն է Հայկի ժառանգների՝ Սիսակի ու Վարաժի նկարագրման ժամանակ:

Մյուս նահապետների մասին խոսելիս ուրիշ զենքերի՝ նրանց տիրապետելու մասին չի նշվում (անգամ Սիսակի հորեղբայր Փառոխի մասին խոսելիս, թեև Խորենացին ամեն անգամ շեշտում է նրա «արի» լինելը):

Անշուշտ, միայն Բելի ապագա նետահարման փաստով չի կարելի բացատրել Խորենացու յուրահատուկ մոտեցումը նետաձիգների նկատմամբ: Հարցն այն է, որ չնայած աղեղի կարևորությանը՝ նետ-աղեղը հասարակության ստորին խավերի զենքն էր. նետաձիգ աղեղնավորները գործում էին թեթևազեն հետևակի կազմում: Իսկ, ըստ Խորենացու՝ նետաձիգ է հայոց զորավարը: Հայտնի է, որ թագավորները (իշխանները, զորավարները) որոշակի քամահրանքով էին վերաբերվում աղեղին: Հին աշխարհի քանդակների (տարբեր կնիքների, գավաթների և այլն) վրա աղեղը իշխանության խորհրդանիշ հանդիսացող զենքերից չի եղել: Այն ավելի շուտ զվարճանքի միջոց է, քան թե զենք: Ըստ էության՝ անհնար է գտնել մարտի մի այնպիսի տեսարան, որտեղ զորավարի ձեռքում միայն աղեղ լինի: Թեև դա տրամաբանական կլիներ ևս մեկ պարզ պատճառով: Որպես կանոն՝ թագավորները մարտին հետևում էին հեռվից՝ բլուր-դիտակետից, իսկ աղեղը համեմատաբար մեծ հեռավորության վրա հակառակորդին խոցելու համար նախատեսված զենք է:

Մարտում նետաձիգների դերի նվազելու միտումը Խորենացուց մի քանի դար անց Արևմտյան Եվրոպայում հասավ իր գագաթնակետին: Բանն այնտեղ հասավ, որ ո՛չ միայն թագավորը, այլև հասարակ ասպետը նետաձիգներին վերաբերվում էր քամահրանքով: Մարտի ընթացքում ասպետը չէր համագործակցում իր իսկ անվտանգությունն ապահովող նետաձիգների հետ:

Այժմ իրադարձությունները փորձենք վերլուծել մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերի տեսանկյունից: Շումերի քաղաքների բանակներում գլխավոր հարվածային ուժը մեծ վահաններով ծանրազեն հետևակն էր, որի գրոհներին թեթևազեն զորքերը չէին կարողանում դիմակայել: Սակայն այս մարտավարությունը բազմաթիվ թերություններ ուներ: Ծանրազեն հետևակից հրաժարումը տեղի ունեցավ մ.թ.ա. 24-րդ դարում, երբ Աքքադի թագավոր Սարգոն Ա-ը (մ.թ.ա. 2316-2261թթ.) ծանրազեն հետևակի խիտ շարքերը փոխարինեց թեթևազեն հետևակի ցրված մարտակարգով: Բանակը մեծացվեց հատկապես նետաձիգների նորանոր ստորաբաժանումներ ստեղծելու միջոցով: Կարճ ժամանակամիջոցում Սարգոնը նվաճեց Միջագետքը, Սիրիան և իր տերության սահմանները հասցրեց Հայկական լեռնաշխարհի հարավային սահմաններին: Ընդ որում՝ շեշտենք, որ թեթևազեն բանակում էլ թագավորը զրահավոր էր, ավելին, միայն նա

ոսկե սաղավարտ կրելու իրավունք ուներ (համեմատի՛ր Բելի սպառազինության նկարագրության հետ): Հավանաբար, Հայկի ու Բելի պատերազմի մասին տեղեկությունները միախառնվել են դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը Սարգոն Ա-ի ձեռնարկած արշավանքի և նրա ու Արմանի երկրի միջև պատերազմի մասին գոյություն ունեցած ավանդության հետ: Եթե կար զենքը և կային մարտում այն կիրառելու մշակված դրույթներ, որոնք, ի դեպ, տարբերվում էին շատ երկրներում ընդունված ձևերից, ապա պետք է կարծել, որ վաղ շրջանում ստեղծվել են լայնալիճ աղեղներով զինված առաջին ստորաբաժանումները, և այս մասին որոշ տեղեկություններ ունեցող Խորենացին էլ դա է ակնարկում:

Քանի որ լայնալիճ աղեղը կիրառելը դժվար էր, և նետաձիգները, ֆիզիկական որակներից բացի, պետք է ունենային նաև բարձր հասակ, ապա պետք է կարծել, որ մարտի դաշտում կարևոր դեր կատարող այս նետաձիգները կազմում էին հետագայում եվրոպական բանակների լեյբ-գվարդիաների պես ստորաբաժանումներ: Դատելով այն հիացմունքից, որով Խորենացին խոսում է լայնալիճ աղեղի կիրառման մասին, կարելի է կարծել նաև, որ այդ ստորաբաժանումները որոշակի արտոնյալ դիրք ունեին: Սակայն հասկանալի է, որ զուտ ենթադրությունների ոլորտից այս հարցը լուրջ վերլուծությունների բնագավառ կարելի է տանել միայն լրացուցիչ տեղեկությունների ի հայտ գալուց հետո:

Վիպասքի դաստիարակող նշանակությունը

Աճող սերնդին պատմականորեն ձևավորված ավանդույթների հիման վրա դաստիարակելը յուրաքանչյուր ժողովրդի համար իր ինքնության պահպանման կարևոր բաղկացուցիչ տարրերից է: Այս առումով, մենք՝ հայերս, որոշակիորեն տարբերվում ենք ժողովուրդների զգալի մասից, և հայրենասիրական դաստիարակության համակարգում պատմահայրենասիրական դաստիարակությանը շատ մեծ տեղ ենք հատկացնում: Դարերի ընթացքում պատմությունը մեր ժողովրդի համար մեծ նշանակություն է ստացել, դարձել աշխարհասփյուռ հայության ընդհանրության խորհրդանիշներից մեկը, որով է՛լ ավելի է արժևորվում «Հայոց պատմությունը»՝ հայ ժողովրդի յուրօրինակ անձնագիրը: Խորենացու «Հայոց պատմությունը» միայն ճանաչողական ու կրթիչ նշանակություն չի ունեցել, այլապես չէր կարողանա այդքան մեծ դեր խաղալ հայապահպանության մեջ: «Պատմությունն» ամբողջությամբ, և Հայկի ու Բելի պատերազ-

մի նկարագրությունը մասնավորապես, նախևառաջ ունեցել է դաստիարակչական նշանակություն[3]:

Պատմահայրը գիտե, որ նախնիների ռազմարվեստի և, հատկապես, հաղթանակների պատմությունը հայրենասեր սերունդ դաստիարակելու նախապայմանն է: Այդ պատճառով էլ ճակատամարտից առաջ Հայկի արտասանած ճառի միջոցով ձևակերպվում է հայրենասեր հայի կյանքի ու պայքարի սկզբունքը: Դիմելով զորքին՝ Հայկն ասում է. «Կա՛մ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տոնենք»: Խորենացին որոնում, գտնում և վեր է հանում պատմության հերոսական էջերը, գովերգում անցյալի քաջագործությունները: Տրամաբանությունը նույնն է ամենուր՝ թագավորից մինչև հասարակ շինականը պետք է պատրաստ լինեն Հայրենիքի համար զոհվելու, և յուրաքանչյուրն իր տեղում հավասարապես պատասխանատու է Հայրենիքի ազատագրության համար:

Պատմության շարադրմանը կից Խորենացին առանձնացնում է հայրենասեր առաջնորդներին՝ նրանց կատարածն ընդօրինակման արժանի համարելով: Մասնավորապես, մեկ այլ տեղ, Հայկյան Արամի մասին կարդում ենք. «Աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով… լավ էր համարում Հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտար ազգեր ոտնակոխ են անում Հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»: Այս մոտեցումն այնքան հստակ համակարգված է, որ կարող ենք արձանագրել, թե 5-րդ դարում սկզբնավորվել է այսօրվա դաստիարակության համակարգում առանցքային համարվող պատմա-հայրենասիրական դաստիարակությունը (նույնը կարելի է ասել նաև 5-րդ դարի մյուս պատմիչների վերաբերյալ):

Հատկանշական է, որ այս գաղափարին են ծառայեցվում նաև դաստիարակության հետ կողմնակի առնչություն ունեցող մի շարք հարցեր: Մասնավորապես, Խորենացին մեծ ակնածանքով է խոսում զենքին տիրապետելու գործում վարպետացած Հայկի մասին, կարևորում ճիշտ նշա-

[3] Իր կատարելիք աշխատանքի անհրաժեշտությունը հիմնավորելու համար «Պատմության» սկզբում Խորենացին գրում է. «Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես՝ մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի» (Գլուխ Գ): Այս խոսքերը դարձել են «Պատմության» դաստիարակչական գնահատման յուրօրինակ չափանիշը:

նառման տիրապետելը, ակնարկում նետաձիգների հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը: Պատմական իրադարձությունների նկարագրմանը զուգընթաց՝ բանակում դիպուկաձիգների (սնայպերների) դերի բարձրացում է քարոզում: Այստեղ տեղին է նշել, որ համաշխարհային ռազմարվեստում դիպուկաձիգների առանձնահատուկ դերը մնաց չգիտակցված՝ նետ ու աղեղի կիրառման ամբողջ ընթացքում: Միայն 19-րդ դարում, հրազենի կատարելագործման հետևանքով որոշ երկրների բանակներում ի հայտ եկան դիպուկաձիգները, որոնց առաջին ստորաբաժանումները ստեղծվեցին 20-րդ դարում: Ավելին, նրանց մարտավարությունը մշակվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939 -1945թթ.) տարիներին:

Այս հարցում էլ միանգամայն որոշակի մոտեցում ունենք: Խորենացին անգա՛մ սպառազինության նկարագրությունը վերածում է դաստիարակչական համակարգի հզոր միջոցի: Հայկը բազմիցս ներկայացվում է որպես «հաստ աղեղնավոր հսկա», սակայն չի նշվում, որ նա սպառազինության այլ տեսակներ էլ ունեցել է: Իսկ Բելի նկարագրության ժամանակ տեսնում ենք սաղավարտը, զրահը, ոտնազրահները, բազկակալները, գոտուց կախված սուրը, վահանը, աջ ձեռքին՝ նիզակը, այսինքն՝ ամբողջ սպառազինությունը: Որոշակիորեն ցույց է տրվում, որ *կարևորը ո՛չ այնքան զենքն ու սպառազինությունն են, որքան զենքին հմտորեն տիրապետելը,* թեև զենքը կարևոր նշանակություն ունի: Հիշենք այն հիացմունքը, որով Խորենացին պատմում է «լայնալիճ աղեղի» կիրառման մասին:

Շատ հետաքրքիր պահ կա, որ տարօրինակորեն մեր պատմաբանների ուշադրությանը չի արժանացել: Մենք այն եզակի ժողովուրդն ենք, որի պատմության այսպիսի կարևոր դրվագում, ինչպես Նախահոր վարած վճռական ճակատամարտն է, տեսնում ենք իրո՛ք ճակատամարտ, ո՛չ թե սիմվոլիկ բախում: Հայկի ու Բելի առճակատումը նման չէ Դավթի ու Գողիաթի նշանավոր մենամարտին, որտեղ զորքը չի մասնակցում ճակատամարտին, պատանին դուրս է գալիս մենամարտի ու Աստծո զորությամբ տապալում հսկա Գողիաթին: Այստեղ դիպուկ նշանառություն չկա, ինչպես կա Վիլհելմ Թելի պատմության մեջ, երբ նա կարողացավ նետահարել որդու գլխին դրված խնձորը: Մեր պարագայում տեղի են ունենում ռազմական գործողություններ: Հայկը ո՛չ միայն ղեկավարում է մարտը, այլև անձամբ մասնակցում դրան, և այս ամբողջը միավորված է մի պատմության մեջ:

Առաջ է գալիս Խորենացու ստեղծած համակարգի կարևորագույն հարցը՝ հայ էթնոսի առաջին խորհրդանշանների (սիմվոլների) ստեղծու-

մը: «Սկզբում սիմվոլացվում են Հայկ Նահապետի անձն ու նրա գործերը, ապա և նրա առավել հաջողակ հետնորդները»: Այսպիսով, Խորենացին հանգում է Հայկի տարած հաղթանակի գնահատման բարոյահոգեբանական կողմին:

Մեզ է ներկայացվում հիրավի կատարյալ հաղթանակի անգերազանցելի մի բանաձև: Իր հողերը օտար նվաճողներից ազատելուց հետո՝ Հայկը չի անցնում հակահարձակման: Ճակատամարտում հաղթանակից հետո ռազմավարական նախաձեռնություն ստացած Հայկը, հնարավորություն ունենալով հանդերձ, չի ներխուժում Բելի տիրույթները, այսինքն՝ չի դառնում նոր բռնակալ: Ռազմական գործողություններն ավարտվում են նույնիսկ ո՛չ թե հակառակորդին երկրի սահմաններից վտարելով, այլ՝ մարտադաշտից Բելի զորքերի նահանջի նկարագրությունով:

Սա՛ է *բարոյական հաղթանակի* իրական դրսևորումը:

Ցավոք, Ավարայրի ճակատամարտի արդյունքների խեղաթյուրված պատկերումից հետո մեր իրականության մեջ կարծեք հիմնավորվել է այն տեսակետը, թե բարոյական հաղթանակը վերացական հասկացություն է, որը, որպես կանոն, «ուղեկցում» է ռազմարվեստի տեսանկյունից պարտություն համարվող ճակատամարտերին՝ դրանց համար հանրամատչելի «արդարացում» գտնելու նպատակով: Մինչդեռ Խոշաբի ճակատամարտի օրինակով Խորենացին փորձում է հուշել, որ հաղթանակի բարոյական և ռազմական կողմերի հակադրումը ո՛չ միայն անհիմն է, այլև՝ տվյալ դեպքում՝ ուղղակի սխալ[4]:

Կրկին անդրադառնալով Խոշաբի ճակատամարտի 4500-ամյակին՝ նշենք, որ այս կարգի հոբելյանները լավագույն առիթ են ո՛չ միայն մանկապարտեզ-դպրոց օղակում, այլև՝ նորաստեղծ հայկական բանակում պատմահայրենասիրական նոր դաստիարակության համակարգ ձևավորելու համար, որի հիմքում կլինի *հայոց հաղթանակների պատմության վրա խարսխված ազգային նոր գաղափարախոսությունը:* Խորենացու «Հայոց պատմությունում» ռազմական գործողությունների գնահատման այս կարգն անչափ արդիական է դարձնում կրթական համակարգի տարբեր աստիճաններում դասավանդվող սկզբունքները վերանայելու հարցը:

[4] Ի դեպ, Ավարայրում հայերի տարած հաղթանակի կամ կրած պարտության հարցի ռազմական ու բարոյահոգեբանական կողմերը ևս վերանայման կարիք ունեն, և միանգամայն հիմնավոր բացատրություն են ստանում Խոշաբի ճակատամարտի նկարագրությանը Խորենացու տված գնահատականների տրամաբանությանը հետևելիս:

Համատարած նյութապաշտության մթնոլորտն այսօր վտանգ է ներկայացնում ազգային արժեքների գործող համակարգի հիմքերի համար, որը չի դիմանա «մրցակցությանը», եթե շրջանառության մեջ չդրվեն նոր, համարձակ մոտեցումներ: Ազգային գաղափարախոսությունը պետք է դառնա հասարակության լայն խավերի համար հասկանալի, ինչ-որ տեղ՝ նաև գրավիչ: Ժամանակն է սովորել ճիշտ ձևով «գովազդել» ազգային ու համաշխարհային մնայուն արժեքները, դրանցով լցնել դաստիարակության ամբողջ դաշտը:

ՀՀ պետությունն իր ձեռքում պետք է կենտրոնացնի պատմահայրենասիրական դաստիարակության ամբողջ համակարգը. անգա՛մ պետական սուղ միջոցներն այս գործում հաջողության հասնելու մեծ հնարավորություն կարող են տալ (պետական հոգածության բացակայության պատճառով՝ հասարակության լայն խավերի համար աննկատ անցավ Վարդանանց պատերազմի 1550-ամյակը 2001թ.):

Ընդամենը մեկ տարի հետո նշելու ենք Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) գահակալման 2100-ամյակը (այս մասին գրեթե ոչինչ չի խոսվում) ու Մեծ եղեռնի 90-րդ տարեդարձը: Դրանք ևս կարելի է ծառայեցնել նորանկախ հանրապետության դաստիարակչական համակարգի բարեփոխման գաղափարին, դրանք վերածել սեփական մոխրից հարություն առնող ժողովրդի՝ ճակատագրի նկատմամբ տարած հաղթանակի խորհրդանիշի:

Եզրակացություն

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ «Հայկ և Բել» վիպասքի օրինակով մենք գործ ունենք մի բավական ուշագրավ իրողության հետ: Եթե պատմագիր հոգևորականն այդքան խորությամբ կարողանում էր ռազմարվեստ վերլուծել, ապա զորավարները դա կանեին շատ ավելի բարձր մակարդակով: 5-րդ դարում հայոց իրականության մեջ ռազմարվեստի տեսական վերլուծությունն այնպիսի բարձր մակարդակ ուներ, առօրեական մտածողության այնպիսի աստիճանի էր հասել, որ հոգևորականը՝ մարտական գործողությունների համար չպատրաստված անձը, ի վիճակի էր այն վերլուծել նման խորությամբ:

Վիպասքում Պատմահոր վեր հանած հարցերի դաստիարակող հսկայական ներուժը մեզ հնարավորություն է տալիս դաստիարակության նոր համակարգ ձևավորել պատմական հիմքի վրա: Մեր կարծիքով, տրամաբանական է, որ նրա ձևավորումն սկսվի մեր առաջին հաղթանակից՝ ակունքներից:

Աղբյուրներ և գրականություն

1. Մովսէս Խորենացի , Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 31-40:
2. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (Ստ. Մալխասյանի աշխարհաբար վերածումով), Երևան, 1940, էջ 20-29:
3. Գ. Վ. Սարգսյան, Հայ ռազմական արվեստի պատմությունից, Երևան, 1969, էջ 28-31:
4. Հայրենիք և ծառայություն, ուսումնական ձեռնարկ ՀՀ զինված ուժերի սպաների և ենթասպաների հասարակական-պետական պատրաստվածության համար, Երևան, 2001, էջ 33-39, 216-228:
5. ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, Մաս II, Գումարտակ, վաշտ, Երևան, 1999, հոդվածներ 26-41, էջ 19-29:
6. ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, Մաս III, Դասակ, ջոկ, տանկ, Երևան, 1997, հոդվածներ 38-60, էջ 40-74, հոդվածներ 90-106, էջ 111-138:
7. Боевой устав Сухопутных войск СССР, часть I, дивизия, бригада, полк, М., 1989.
8. Энциклопедия военного искусства, Снайперы, Минск, 1997, с. 4-15.
9. Е. А. Разин, История военного искусства, т. I, М., 1955, с. 34-66, 187-192, 287-331.
10. История военного искусства, под ред. А. А. Строкова, М., 1966, с. 28-39.
11. Франц Меринг, Очерки по истории войн и военного искусства, М., 1956, с. 66-72.
12. Б. Х. Лиддел Гарт, Стратегия непрямых действий, М., 1957, с. 33-76.
13. История военного искусства, под общ. ред. П. А. Ротмистрова, М., 1963, с. 30-49, 101-246.
14. История войн и военного искусства, М., 1970, с. 12-35.
15. История военного искусства, М., 1984, с. 9-32.

Մարտի 10, 2004թ.

УРОКИ НАШЕЙ ПЕРВОЙ ПОБЕДЫ

Сурен Мартикян

Резюме

Основываясь на изложенном Мовсесом Хоренаци в его «Истории Армении» сказании о восстании прародителя Гайка против тирана Бела, в статье анализируются вопросы развития военно-теоретической мысли в ранний период нашей истории.

Делается также попытка наиболее полно высветить образ Гайка как стратега-полководца. Учитывая огромную воспитательную роль, которую на протяжении веков играла легенда о Гайке и Беле, предлагается включить в государственную учебно-воспитательную программу новую концепцию военно-исторического воспитания. Такая концепция предполагает изучение истории наших военных побед и, в частности, первой – одержанной прародителем Гайком.